

---

## **ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱԾՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԴԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ (1991-1999 թթ.)**

### **ԿԱՐԻՍԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Ղարաբաղյան հակամարտությունը հետխորհրդային տարածաշրջանում թերևս ամենաքաղաքացի և հակասական հիմնահարցերից է, որի խաղաղ ճանապարհով կարգավորումը բխում է թե՛ Հայաստանի, թե՛ Ադրբեյչանի, թե՛ տարածաշրջանի մյուս պետությունների, ինչպես նաև գերտերությունների, հատկապես ԱՍՍ-ի և ՌԴ-ի շահերից:

Հայաստանի համար Ղարաբաղյան հակամարտության կարգավորումն առավել կենսական անհրաժեշտություն է, քանի որ որա շնորհիվ Հարավյային Կովկասում կվերագործարկվեն ենթակառուցվածքները, ու Հայաստանը, Ադրբեյչանը և Վրաստանը տնտեսության բնագավառում կարող են առաջընթաց ունենալ:

ԽՍՀՄ տարածքում դարաբաղյան հիմնախնդիրն առաջինն էր պատերազմների վերաճած ազգամիջյան հակամարտությունների շարքում: Այն առանձնանում է իր բարդությամբ և շահերի ու դիրքորոշումների հակասականությամբ: Բարդությունն այն է, որ ղարաբաղյան հիմնախնդիրի սկիզբը դրվել է ԽՍՀՄ գյուղական ժամանակ, ստալինյան խարդավանքների հետևանքով, մինչդեռ լուծումը պետք է իրականացվի արդի ժողովրդավարացման գլոբալ գործընթացների պայմաններում: Թվում է, թե խնդրի լուծումն առանձնապես բարդ չափում է լինի, քանի որ միջազգային հանրությունը պետք է ճանաչի ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը, ինչպես դա արվեց Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով բաժանված Գերմանիայի վերամիավորման դեպքում: Սակայն ի հայտ եկան տարաբնույթ, հակասական շահեր ու դիրքորոշումներ: Բանն այն է, որ հակամարտության կարգավորման գործում ներքաշված տերությունները գործընթացն օգտագործում էին իրենց նպատակների իրականացման համար, ինչը երբեմն նպաստում էր հակամարտության էլ ավելի սրվելուն, որը շուտով ուղղակիորեն սպառնաց տարածաշրջանում անվտանգության և կայունության ապահովմանը:

Ինչպես նշվեց, հակամարտության լուծմանն ուղղված գործընթացը պետք է իրականացվեր քաղաքակիրք եղանակով, որի առաջին քայլը պետք է լիներ Լեռնային Ղարաբաղի և Ադրբեյչանի իշխանությունների՝ բանակցությունների սեղանի շուրջ նստելը, մինչդեռ Հայաստանի՝ բանակցելու առաջարկները ադրբեյչանական կողմն պարբերաբար մերժում եր: Մյուս կողմից, միջնորդները խուսափում էին Լեռնային Ղարաբաղի իշխանություններին բանակցային գործընթացին մասնակից դարձնելուց, ինչը բացասաբար էր անդրադառնում հիմնախնդրի լուծման վրա:

Միակ ձեռքբերումը Լեռնային Ղարաբաղի և Ադրբեյչանի միջև ուղիղ շփման արդյունքում ստորագրված գինադադարի պայմանագիրն է:

Նախկին ԽՍՀՄ-ի կենտրոն Մոսկվան, թվում է, այլև անելիք չունի, և հարցի լուծումը այսուհետ միջազգային հանրության խնդրին է: Սակայն,

ମାହୁକିନ ଟାରାଦ୍ଵୀପିମ ଟନିତେସାକ୍ଷାନ, ଝାଲାରାକ୍ଷାନ ଲ ରାଜମାକ୍ଷାନ ଅଧିକେତ୍ରି-  
ର୍ଯୁଟିନ୍ କିରଣନ୍ତେଲୁଠ ହେଟିକାନନ୍ଦିପାତ୍ର ପାଇସାପାତାନିହ ନାଚନିତିର୍ଯ୍ୟାନ ଅରିଟାରିନ ଝା-  
ଲାରାକ୍ଷାନନ୍ଦିପାତ୍ର ଝାଲାରାକ୍ଷାନ ମାର କାମନ୍ତେ ହିର ଅନ୍ଦାରାଜିନ ଶାହେରି ଅଧି-  
କ୍ଷାନନ୍ଦିପାତ୍ର ହାତିକାପତ୍ର ହାରାକ୍ଷାନ ନାମନାପାଇରାକ୍ଷାନ କିରିକାମାଜାନ ଟା-  
ରାଦ୍ଵାରାଦ୍ଵାରାନ୍ତିମ, ଝାନିହ ନି କିନ୍ତରାଫାରେସାପିରାନ୍ତେରି କାରିନିର ଟାରାନାଙ୍ଗିକ ଫରିତି ତ  
ନିରା ହାମାର: ଆଜି ଅନ୍ତିମନ୍ତ୍ର ନାରାରାପାରାଜ୍ୟାନ ହାକାନାମାରିଟିର୍ଯ୍ୟାନିନ୍ ମେତ୍ ତାତାରନ୍-  
ନ୍ତିତ ତ<sup>1</sup>, ପିଲାତି ପାଇସାପାତାନିହ ନାଚନିତିର୍ଯ୍ୟାନିନ୍ ଶିର କାରିନ୍ ଶେବର ମନାଲ ନିରା  
କାରଫାଵିରମାନ ଫରିଦନ୍ତରାଗନ୍ତେରିଃ: ନିଉନ ଶାରିଦାରିତରନ୍ତେରିପ ତ ନେକାପାରାକ୍ଷିତ  
ନାଳି ଆମ୍ବି-ର: ଆଜିଲ କିନ୍ତମିଂହ, ନାରାରାପାରାଜ୍ୟାନ ହାକାନାମାରିଟିର୍ଯ୍ୟାନିନ୍ ନାମାତେ  
ନାରାକ୍ଷାନ କିରିକାମାଜାନ ପାଇସାପାତାନିହ ନାଚନିତିର୍ଯ୍ୟାନ ଲ ଆମ୍ବି-ର ଝାଲାରାକ୍ଷାନ  
ନିରକ୍ରେନ ଅନ୍ଦାରାଜିନ୍ତେଲିନି: ଆଏ ଜିକ ଅଧିକାରିତାପାତ୍ର ପାଇସାପାତାନିହ ନାଚନିତିର୍ଯ୍ୟାନ  
ନିରମାକାନ ଫରିଦନ୍ତରିତିର୍ଯ୍ୟାନିନ୍ତେରି ତ ନିରମାକାନ ମହିତିପାଦ ତିନ ନେ ଅନ୍ଦାରାଜିନ ହାକାନ-  
ମାରିଟିର୍ଯ୍ୟାନ କାରଫାଵିରମାନନ୍ଦ, ନିରାନ ନିରାନିର ନିରାନିର ଟାରାଦ୍ଵାରାଦ୍ଵାରାନ  
ନିରମାକାନନ୍ଦିରିନ ନିରମାକାନ ନିରମାକାନ ନିରମାକାନ<sup>2</sup>.

Ղարաբաղյան շարժման նոր փուլը սկսվել է 1988 թ.՝ «Վերակառուցման» ժամանակաշրջանում՝ որպես խորհրդային վարչակարգի ազատականացման հետևանք: 1988 թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ ժողվարգամավորների մարզային խորհրդի նստաշրջանը որոշում ընդունեց ԼՂԻՄ-ը Ադր. ԽՍՀ կազմի ՔԽՍՀ կազմի մեջ փոխանցելու վերաբերյալ Ադր. ԽՍՀ և ՔԽՍՀ Գերագույն խորհրդների առջև միջնորդության մասին<sup>3</sup>: Քենց սա էլ հնարավորություն տվեց նորից բարձրացնելու ղարաբաղյան իհմնախլոնդրի արդարացի լուծման հարցը:

Հակամարտության խաղաղ կարգավորմանն աջակցելու առաջին լուրջ քայլը Ռուսաստանի Դաշնությունը ծեռնարկեց Ղազախստանի հետ համատեղ: 1991 թ. սեպտեմբերի 20-23-ը այս երկրների նախագահները միութենական ուժային նախարարների հետ այցելեցին Բարու, Ստեփանակերտ և Երևան, որից հետո ժելեզնովոդսկում ստորագրեցին կոմյունիկե, որը ստացավ «Ռուսաստանի Դաշնության նախագահ Բ. Ելցինի և Ղազախստանի նախագահ Ն. Նազարբաևի միջնորդական առաջելության արդյունքների մասին միասնական կոմյունիկե»<sup>4</sup> անվանումը: Հետագայում Ռուսաստանի Դաշնությունը, ցանկանալով պահպանել իր առաջատար դերը տարածաշրջանում, ջանաց հակամարտության լուծումը դեկավարել միանձնյա, սակայն դա որևէ արդյունք չտվեց:

Կոմյունիկելի կարևորագույն կետերն էին կրակի դադարեցումը, հակասահմանադրական որոշումների չեղյալ հայտարարումը, հակամարտության գոտուց զինված կազմավիրումների դուրս բերումը<sup>5</sup>, որոնք կոմյունիկեում շարադրված էին որպես հավասարազոր, հետևաբար կողմերի համար

<sup>1</sup> Стёу Шакарянц С. Россия и фактор энергоносителей в Закавказье // Политика постсоветской России на Кавказе и ее перспективы // Армянский центр национальных и международных исследований. Еր., 2001, № 207.

<sup>2</sup> Sté Hovhanisyan Nikolay. The Karabakh Problem, Yerevan, 1999, to 51:

<sup>3</sup> Տես Ohanianyan N., Անկախության քայլերը (ԼՀԴ-ում անցկացրած հանրաքենս և ոճառությունները 1991-1998 թթ.), Ստեղծանակենտ, 1998:

<sup>4</sup> Stein Гаспарян А. Динамика Карабахского конфликта и роль Российской Федерации в его урегулировании // "Центральная Азия и Кавказ", № 5 (6), 1999, с. 84.

պարզ չէր, թե ինչ հերթականությամբ է անհրաժեշտ ապահովել դրանց կատարումը: Այս հանգամանքը գործնականում անհամաձայնությունների առաջացնան պատճառ դարձավ: Աղրթեցանը ոչ միայն չդադարեցրեց կրակը, այլև սաստկացրեց այն, ինչը Ռուսաստանի Դաշնությունը չդատապարտեց: Միայն 1992 թ. հունվարի վերջին Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարությունը տարածեց հատուկ հայտարարություն, որում հականարտող կողմերին կոչ էր անում անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները և Մոսկվայի միջնորդությամբ վերսկսել բանակցային գործընթացը<sup>6</sup>: 1992 թ. Ղարաբաղի հայությանը պարտադրվեց պատերազմ, որին մասնակցեցին նաև Հայաստանի հայերը:

Ռուսաստանի Դաշնությունը տարածաշրջանում առկա դրությանը կըրկին անդրադարձավ 1992 թ. մարտի 24-ին, երբ ԵԱՀԽ-ն որոշում ընդունեց Լեռնային Ղարաբաղի հարցին նվիրված կոնֆերանս հրավիրել Մինսկում: Որոշված էր, որ դրան պետք է մասնակցեին 11 պետություն (Աղրթեցան, Հայաստան, Ռուսաստանի Դաշնություն, Բելառուս, Թուրքիա, ԱՄՆ, Ֆրանսիա, Գերմանիա, Չեխիա, Ծվեդիա, Իտալիա)<sup>7</sup>: Նախատեսվող կոնֆերանսի անցկացման վայրի անվաննամբ այդ ձեռնարկի մասնակից շահագրգիռ կողմերի կազմը կոչվեց Մինսկի խումբ: Ըստ ամերիկյան մանուլի՝ իր պատմության մեջ ԵԱՀԽ առաջին անգամ պարտավորվում էր հականարտությունը լուծել խաղաղության համաժողովի միջոցով<sup>8</sup>: Հականարտության կարգավորման գործում ԵԱՀԽ-ի և այլ շահագրգիռ պետությունների ակտիվացմանը (օրինակ՝ Իրան, Թուրքիա) Ռուսաստանի Դաշնության միջնորդական դերը նշվեց երկրորդ պլան:

1992 թ. գարնանը ՌԴ ԱԳՆ հատուկ ներկայացուցիչները նախարար Վ. Կազմիրովի գլխավորությամբ այցելեցին հականարտության գոտի, ինչից հետո առաջարկվեց կարգավորման կոնկրետ ծրագիր:

Ռուսաստանի Դաշնության կարծիքով՝ կարգավորման գործընթացը պետք է լիներ երկու փուլով. առաջին փուլում կողմերից պահանջվում էր դադարեցնել զինված գործողությունները և վերաբառնալ 1992 թվականի հունվարի 1-ի դրությանը, այնուհետև ձեռնամուխ լինել ԼՂՀ ապագա կարգավիճակը որոշելում<sup>9</sup>: Սակայն Ռուսաստանի Դաշնության առաջարկությունը մերժվեց ԵԱՀԽ ՄԽ-ի մի քանի անդամների կողմից, և 1993 թ. հոկտեմբերին Մինսկի խումբը նշակեց «վերանայված գրաֆիկ», որը, ըստ հայ և ռուս որոշ դիվանագետների, կրկնում էր ռուսական տարբերակում առկա տեսակետները: ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի կարծիքով՝ երկու ծրագրերի միջև միակ էական տարբերությունն այն էր, որ Ռուսաստանի Դաշնության առաջարկում կար հստակ մեխանիզմ, որը երաշխավորում էր ռազմական գործողությունները չվերսկսելը ու «խաղաղապահ ուժերի ներկայություն»<sup>10</sup>:

<sup>6</sup> Տես **Казимиров В.** О карабахском кризисе // "Международная жизнь", 2000, № 5, էջ 82:

<sup>7</sup> Տես "Документ СБСЕ. Первая дополнительная встреча Совета СБСЕ". Резюме. Хельсинки, 1992, 24 марта:

<sup>8</sup> Տես "The Washington Times", 25.03.1992:

<sup>9</sup> Տես **Шакарянц С.** Россия и закавказские конфликты // Политика постсоветской России на Кавказе и ее перспективы // Армянский центр национальных и международных исследований. Еր., 2001, էջ 35:

<sup>10</sup> Տես "Интервью президента Армении Л. Тер-Петросяна" // "Независимая газета", 1994, 12 января:

1993 թ. վերջին Ադրբեյջանում տեղի ունեցավ պետական հեղաշրջում, և նախագահ դարձավ Յեյդար Ալիկը, որը հայտնի էր իր ռուսամետությամբ: Ռուսաստանի Դաշնության համար բարենպաստ պայմաններ էին ստեղծվում հետագա բանակցային գործընթացն ինքնուրույն դեկավարելու համար: Միաժամանակ Հայաստանի և Ռուսաստանի Դաշնության միջև արդեն գործում էր Հայաստանի տարածքում ռուսական ռազմական բազաների հետագա գործումներության մասին համաձայնագիրը, որն էլ ավելի էր ամրապնդում: Ռուսաստանի Դաշնության դիրքերը տարածաշրջանում: Ռուսաստանի Դաշնությանը ծեռնտու էր, որպես միակ միջնորդ, անմիջական շփոմներ կազմակերպել հակամարտող կողմերի միջև, որովհետև ցանկացած այլ միջնորդ փորձելու էր պաշտպանել սեփական շահերը տարածաշրջանում:

Այնուամենայնիվ, կարծում ենք, որ հակամարտության վերջնական լուծումը հօգուտ որևէ մեկի չեր բխում Ռուսաստանի Դաշնության շահերից: Յիշենք, որ 1992 թ. Վրաստանում և Ադրբեյջանում ուժեղացավ Ռուսաստանի Դաշնության գինված ուժերի ստորաբաժանումներն ու սահմանապահ զորքը դուրս բերելուն ուղղված շարժումը: Ռուսաստանի Դաշնությունն այս հակամարտությունը օգտագործեց որպես խաղաթուղթ՝ պահպանելու իր ռազմական ներկայությունը Ադրբեյջանում և ստիպելու նրան դիմել որոշակի փոխգիզումների Ռուսաստանի Դաշնության համար կենսական նշանակություն ունեցող հարցերում: Ռուսաստանի Դաշնությանը ծեռնտու չեր նաև խնդիրը լուծել հօգուտ Հայաստանի, քանի որ նա կլորցներ Ադրբեյջանի վստահությունը և հետևաբար՝ վերջինիս նկատմամբ ունեցած իր ազդեցությունը, մյուս կողմից՝ կմեծանար Հայաստանի ինքնուրույնությունը:

Ռուս որոշ ուսումնասիրողների կարծիքով՝ ղարաբաղյան հակամարտության նկատմամբ Ռուսաստանի Դաշնության մոտեցումը պայմանավորված էր այն հանգանաքով, որ դեռևս ծևավորված չեր նրա արտաքին քաղաքականությունը հատկապես Հարավային Կովկասի նկատմամբ: Դա, իհարկե, չեր կարող չառաջացնել Հայաստանի դժգոհությունը, քանի որ վերջինս հավատարիմ էր Ռուսաստանի Դաշնությանը՝ միևնույն ժամանակ հասկանալով, որ դրանով հանդուրժում է Ադրբեյջանի հզորացումը: Հատկապես անհանգուտացնում էր այն, որ Ռուսաստանի Դաշնությունը ճգճգում էր զինամբերի տրամադրումը Երևանին, այն դեպքում, եթե ադրբեյջանցիները անպատիծ զավթում էին նախկին ԽՍՀՄ ռազմական տեխնիկան՝ այն օգտագործելով Լեռնային Ղարաբաղի դեմ: Աճում էր նաև հայ ժողովրդի, մասնավորապես ընդդիմության դժգոհությունը, Հայաստանի իշխանությունների վարած արտաքին քաղաքականության նկատմամբ: ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն իր դժգոհությունը հայտնեց Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպան Վ. Ստոլիշինին՝ Ռուսաստանի Դաշնության բռնած չեզոք դիրքի համար<sup>11</sup>:

Արդյունքում թե՛ հայկական, թե՛ ադրբեյջանական կողմերը բազմից հայտարարեցին, որ ռուսական զորքերը հակառակորդին օժանդակել են ինչպես գենքով, այնպես էլ ռազմական ամունիցիայով (զինվորական հանդերձանք) և զինվորներով<sup>12</sup>:

<sup>11</sup> Տե՛ս Ստոլիշին Վ. Մоя миссия в Армению. М., 2001, էջ 57:

<sup>12</sup> Տե՛ս Կօջաման Օ. Южный Кавказ в политике Турции и России в постсоветский период. М., 2004, էջ 220:

Տարածաշրջանուն հստակ մշակված արտաքին քաղաքականություն չունենալու պատճառով Ռուսաստանի Դաշնությունը փորձում էր միաժամանակ պաշտպանել բոլորի շահերը, սակայն Ադրբեյջանի և Հայաստանի պարագայուն օգնելով մեկին կնշանակեր հաշվի չառնել մյուսի շահերը:

Նշենք, որ Հայաստանի արտաքին քաղաքականությունը նույնաեն նոր էր մշակվում: Հայաստանը Անդրկովկասում Ռուսաստանի Դաշնության միակ կարևորագույն բազան էր, և վերջինս Հայաստանի նկատմամբ արտաքին քաղաքականություն մշակելիս այս հանգամանքը պետք է հաշվի առներ, հակառակ դեպքում կարող էր զրկվել Հայաստանի աջակցությունից, ինչը և ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ազգային անվտանգության հարցերով գլխավոր խորհրդականի տեղակալը հայտնեց Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանին<sup>13</sup>:

1993 թվից Ռուսաստանի Դաշնությունը սկսեց ակտիվացնել հակամարտության կարգավորմանն ուղղված իր միջնորդական գործունեությունը: Մոսկվայի և Վաշինգտոնի միջև առաջացած տարածայնություններ՝ կարգավորման գործընթացի նկատմամբ կիրավուող միտերման և քաղաքական որոշումների ու նախաձեռնությունների շուրջ: Երկուսն էլ ձգտում էին հաշտեցնել կողմերին<sup>14</sup>, մրցելով իսկաղաքարի դերը ստանձնելու համար<sup>15</sup>:

Այդ տարիների միջազգային միջնորդությունների ընթացքում առաջնային էր համարվում հակամարտող կողմերի հատնան գծում կրակի դադարեցումը, որից հետո կստորագրվեր քաղաքական հանաձայնագիր հակամարտության գիմված փուլն ավարտելու մասին: ԼՂՀ ապագա քաղաքական կարգավիճակի հարցի լուծման մեջաշնորհը տրվել էր ԵԱՀԽ Մինսկի կոնֆերանսին, որը կարող էր սկսել իր աշխատանքները կարգավորման առաջին փուլն ապահովելու դեպքում, այն է՝ գիմված հակամարտությունը դադարեցնելուց հետո:

1993 թ. սեպտեմբերի 12-13-ին Ռուսաստանի Դաշնության նախաձեռնությամբ Մոսկվայում տեղի ունեցած բանակցությունների ժամանակ քննարկվեցին հակամարտող կողմերի դիտողությունները Մինսկի խմբի ժամանակացույցի վերաբերյալ: Դիտողությունների հիման վրա առաջարկվեց փաստաթոթերի փաթեթ՝ որպես հիմնախնդրի լուծման փոխգիշումային տարրերակ, և ընդունվեց համատեղ կոմյունիկե, ըստ որի՝ հայտարարվեց կրակի դադարեցում մինչև հոկտեմբերի 5-ը<sup>16</sup>: Սակայն Ռուսաստանի Դաշնության և Արևմուտքի միջև ուժեղացող ռազմավարական մրցակցություններ՝ վարկարեկելով ԵԱՀԽ-ի միջնորդությունը: Դա ակնհայտորեն արտահայտվեց, այսպես կոչված, «Ննջակի ֆորմատում»:

Այդ նախաձեռնության շրջանակներում Ռուսաստանի Դաշնության և ԱՄՆ-ի մասնակցության նպատակները տարրեր էին. Վաշինգտոնը ցանկանում էր հավասարակշռել Ռուսաստանի Դաշնության մասնակցությունը

<sup>13</sup> Տես **Ступинин В.** Моя миссия в Армению. М., 2001, էջ 156:

<sup>14</sup> Տես The Nagorno Karabagh Crisis: A Blueprint for Resolution. A Memorandum Prepared by the Public International Law and Policy Group. May 2000. <http://www.armeniaforeignministry.am>

<sup>15</sup> Տես **Прижин В.** "Черный Сад" международного сообщества: конфликт в Нагорном Карабахе и проблемы глобального мироустройства после "холодной войны" // "Центральная Азия и Кавказ", № 6(24), 2002, էջ 23:

<sup>16</sup> Տես The Nagorno Karabagh Crisis: A Blueprint for Resolution. A Memorandum Prepared by the Public International Law and Policy Group. May, 2000: <http://www.armeniaforeignministry.am>

իականարտության կարգավորման գործում, իսկ Մոսկվան՝ կամիսել ԱՄՆ-ի և Թուրքիայի ազդեցության ուժեղացումը Կովկասում:

«Ղնգյակի ֆորմատն» (անվանվում է նաև «Երեքի նախաձեռնություն»՝ ըստ «չեղոք մասնակիցների թվի») այն էր, որ Ռուսաստանի Դաշնության, ԱՄՆ-ի և Թուրքիայի ներկայացուցիչներով ԵԱՀԽ ՄԽ խաղաղարար գործընթացը շարունակվի որոշակի ժամկետներում, այսինքն՝ գործի, այսպես կոչված, «օրացուցային կարգավորման» գաղափարը։ Այդ մասին հայտարարվեց 1993 թ. հունվարի 5-8-ը Սոսկվայում տեղի ունեցած հանդիպման ժամանակ, որին մասնակցեց Մինսկի խմբի այն ժամանակվա նախագահ Մարին Ռաֆայելին<sup>17</sup>։ Ավելի ուշ «Երեքի նախաձեռնությունը» վերափոխվեց «3+1» նախաձեռնության (կամ «5+1 ֆորմատ»), այսինքն՝ Մ. Ռաֆայելին դարձավ միջնորդական գործընթացի լիիրավ անդամ։

Հակամարտության կարգավորման հարցում Ուսուաստանի Դաշնության ունեցած դիվանագիտական առավելությունը շարունակվեց մինչև 1992 թվականի վերջը: Սեպտեմբերի 16-17-ը նախագահ Բ. Ելցինի ներկայացուցիչը պաշտոնական այցով ժամանեց Ադրբեյջան, իսկ արդեն սեպտեմբերի 19-ին Սոչիում Ուսուաստանի Դաշնության պաշտպանության ու անվտանգության նախարարի և Հայաստանի ու Ադրբեյջանի պաշտպանության նախարարների մասնակցությամբ ստորագրվեց համաձայնագիր՝ հակամարտության գոտում բոլոր տեսակի մարտական գործողությունները երկու անսովով դադարեցնելու մասին:<sup>18</sup> Ուսուաստանի Դաշնության այս հաջողությունն ամրապնդվեց սեպտեմբերի 23-ին, երբ Մոսկվայում Հայաստան ու Ադրբեյջանը ստորագրեցին զինատեխնիկական արձանագրություն Սոչիի համաձայնագրի պայմանները կատարելու մեխանիզմի մասին: Վերջինիս համաձայն՝ Ուսուաստանի Դաշնությունից տարածաշրջան ուղարկվեցին 50 մարտական դիտորդներ:

Այսպիսով, Ուլսաստանի Դաշնության միջնորդությամբ հականարտող կողմերի միջև կայացավ համաձայնություն, որը, սակայն, ստվերում թողեց ԵԱՀԽ Սիմսկի կոնֆերանսի անդամներին:

1993 թ. սեպտեմբերի 22-ին Մոսկվայում կայացավ ԱՊԴ անդամ պետությունների նախագահների նստաշրջանը<sup>19</sup>, որտեղ Ադրբեյջանը դարձավ միության լիիրավ անդամ: Այդ քայլով Ադրբեյջանը ակնկալում էր ստանալ Ռուսաստանի Դաշնության օգնությունը դարաբառյան հարցն իր օգտին լուծելու համար, ինչը, սակայն, տեղի չունեցավ, և Ադրբեյջանը շարունակեց իր համագործակցությունը Թուրքիայի հետ: Դրանից հետո Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարը նախաձեռնություն վերողեց իր ձեռքը:

1994 թվականի հետոքվարի 18-ին Մոսկվայում Աղորեջանի, Յայատանի և Լեռնային Ղարաբաղի ռազմական ներկայացուցիչների միջև տեղի ունեցած հանդիպման արդյունքում ստորագրվեց արձանագրություն, և ձեռք բերվեց համաձայնություն կրակը դադարեցնելու, զինված ուժերը դուրս բերելու և անվտանգության գոտի ստեղծելու մասին։ Ըստ արձանագրության 7-րդ կետի՝ ՈՂ պաշտպանության նախարարը իրավունք ու

<sup>17</sup> Стю Шакарянц С. Россия и закавказские конфликты, № 51:

<sup>18</sup> Տպական պատճենների մասին հայագիտական հոգաբարձություն, էջ 3.

<sup>19</sup> Տիւ Մանասյան Ա. Կարաբахский конфликт. Ключевые понятия и хроника. Ер., 2005, էջ 14:

Աեր համաձայնության խախտման դեպքում ձեռնարկել ցանկացած, այդ թվում՝ մարտական գործողություններ<sup>20</sup>: Արձանագրությունը դարձավ 1994 թ. զինադադարի հիմքը<sup>21</sup>:

Մոսկվայն արձանագրության ստորագրումից հետո Թուրքիայի արտաքին գործերի նախարարը Հայաստանի նախագահի գլխավոր խորհրդականին հայտնեց, որ Թուրքիան խոչընդոտելու է արձանագրության իրականացմանը, իսկ Աղրբեջանի նախագահը ռուս դիտորդների խմբի ղեկավարի հետ ունեցած հանդիպման ժամանակ հայտնեց, որ թույլ չի տա ռուսական զինվորների մուտքը Աղրբեջան<sup>22</sup>: 1994 թ. մայիսին Ռուսաստանի Դաշնության միջնորդությամբ հակամարտության կողմերը ստորագրեցին Բիշրեկյան արձանագրությունը, որը սկիզբ դրեց կրակը դադարեցնելու մասին պայմանագրուվածություն ձեռք բերելուն:

Ուսասատանի Դաշնության ակտիվությունը չէր կարող աննկատ մնալ ԵԱՀԽ-ից, որը շուտով նրան մեղադրեց սեփական շահեր հետապնդելու, այն է՝ Կովկասում իր ազդեցությունը վերադարձնելու մեջ: Ըստ որոշ Վերլուծաբանների՝ Ուսասատանի Դաշնությունը ոչ միայն մեծ օգուտ քաղեց այս հակամարտությունից՝ ամրապնդելով իր դիրքերը Կովկասում, այլև հենց ինք հրահրեց և դեկապարեց հակամարտությունը:

Մայիսյան զինադադարից հետո ԵԱՀՆ-ի կոնֆերանսները հարաբերությունների յուրօրինակ պարզաբանումներ էին Ուսւաստանի Դաշնության և արևմտյան այն երկրների միջև, որոնք չեն ցանկանում այդ խնդրի կարգավորման գործում Ուսւաստանի Դաշնության դերի մեծացումը: Մտավախություն կար, որ կարգավորման հարցում Մոսկվայի հաշտարար դերի ուժեղացումը կմեծացնի նրա ազդեցությունը ողջ Կովկասում, ուստի ձեռնարկվեցին միջոցներ՝ ձևավորելու կոլեկտիվ խաղաղարար ուժեր:

Այս անգամ Ռուսաստանի Դաշնության և ԱՄՆ-ի միջև արկա տարածայնությունները վերաբերում էին ԵԱՀՆ-ի կազմում ունեցած մասնակցությանը. Սուկվան ծգտում էր ապահովել առնվազն 50 % մասնակցություն, մինչդեռ Կաշինգտոնը հանդուրժում էր ռուսական մասնակցության միայն 30 %-ը<sup>23</sup>: Գագաթաժողովի ժամանակ որոշվեց ստեղծել միջնորդական հնատիտուտ: Ռուսաստանի Դաշնությունը դարձավ մշտական հիմունքներով համանախագահ, մյուս համանախագահներն էին Շվեյչարան և Ֆինլանդիան: 1997 թ. սկզբին համանախագահները երեքն էին, և Մինսկի խմբի մշտական համանախագահներ դարձան Ռուսաստանի Դաշնությունը, ԱՄՆ-ը և Ֆրանսիան: Բուլղարիայի հանդիպության ժամանակ արևմտյան պետությունները ԼՂՀ ճամաշեցին հականարսության հնարինությունը կողմնակալից:

1996 թվականի դեկտեմբերին Լիսարոնի գագաթողովում առաջարկվեց հակամարտության կարգավորման «փոլային» տարրերակ, որը, սակայն, չէր բխում Հայաստանի շահերից, և վերջինս իր վետոյի իրավունքն օգտագործելու շնորհիկ արգելափակեց երեք ոչ շահավետ կետ<sup>24</sup>: Ուստամբանի Դաշնության, ինչպես նաև Արդրեցանի և Թուրքիայի դիրք-

<sup>20</sup> Տե՛ս Ստոպիշին Վ. Աշվ. աշխ., էջ 266:

<sup>21</sup> Студенты В. С. Казимира. Альтернативы урегулирования карабахского конфликта // "Аналитические Записки", № 1(3), 2004, т. 3:

<sup>22</sup> Степан Ступишин В. Աշխ. աշխ., էջ 124:

<sup>23</sup> См. Статьи В. Бычкова, А. Смирнова, С. Тимофеева.

<sup>24</sup> Ст. и Шакарянц С. Россия и закавказские конфликты, № 73:

የጥቃት ከአዲስአበባ የደንብ ማረጋገጫ በመሆኑ የሚከተሉት ደንብ የሚያስፈልግ ይችላል፡፡

Հայաստանը Մոսկվայի այդ քայլը դիտում էր որպես Արևատքի հետ ունեցած ռազմավարական մարտի պարտություն: Հայկական պատվիրակությունը հանդես եկավ ԵԱՀԽ գործող նախագահի հայտարարության դեմ այն հիմնավորումով, որ այն կանխորոշում էր Ղարաբաղի կարգավիճակը, ինչը հակասում էր 1992 թվականի ԵԱՀԽ-ի այն որոշմանը, ըստ որի Ղարաբաղի ապագա կարգավիճակը պետք է որոշվի բանակցությունների արդյունքում, հակամարտող կողմերի միջև քաղաքական պայմանագիր ստորագրելուց հետո<sup>25</sup>:

1997 թ. հուլիսին և դեկտեմբերին ԵԱՀՆ-ը կրկին առաջարկեց կարգավորման ծրագիր, որը ներառում էր հականարտության կարգավորման «փաթեթային» և «փուլային» տարբերակները, որոնց կապակցությամբ Հայաստանում սկսվեցին բուռն քննարկումներ: «Փուլային» տարբերակի առաջին փուլը նախատեսում էր ղարաբաղյան գինված ուժերի դրւում բերում ԼՂՀ հարակից շրջաններից (այսպես կոչված, «անվտանգության գոտի»), փախստականների վերադարձ, ճանապարհների բացում, իսկ երկրորդ փուլում՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի քննարկում: ՀՀ նախագահը կողմ արտահայտվեց կարգավորման «փուլային» տարբերակին, ինչը երկրում դժգոհություն առաջացրեց նրա վարուծ քաղաքականության նկատմամբ, և արդյունքում Լևոն Տեր-Պետրոսյանը ստիպված եղավ հրաժարական տալ<sup>26</sup>: Դամաձայն ՀՀ Սահմանադրության՝ նախագահի պարտականությունները ստանձնեց Վարչապետ ՀՀ Վարչապետ Ուրեմտ Քոյադյանը:

1998 թ. հոկտեմբերին ԵԱՀԽ ՄԽ առաջարկեց կարգավորման նոր ծրագիր՝ «ընդհանուր պետության» սկզբունքով, որը պետք է գործեր ԼՂՀ պետական-քաղաքական կարգավիճակը վերջնականապես սահմանելուց հետո: Դայաստանն ու Արցախը հանաձայնեցին ընդունել այն որպես խաղաղ բանակցությունները վերսկսելու հիմք<sup>27</sup>, իսկ Ադրբեյչանը մերժեց՝ պատճառաբանելով, որ հակամարտության կարգավորմանն ուղղված ԵԱՀԽ ՄԽ-ի առաջարկությունները փաստացի անկախություն են բերում ԼՂՀ-ին:

1999 թ. Ստամբուլում տեղի ունեցած հանդիպումը ոչինչ չփոխեց հակամարտության կարգավորման գործում, սակայն տարածաշրջանային էներգետիկ ոլորտում նոր դժգոհությունների հիմք դարձավ: Կովկասում էներգետիկ նախագծերի վերաբերյալ համաձայնագրերի փաթեթ ստորագրելուց հետո ԱՄՆ պետդեպարտամենտը հայտարարեց, որ նպաստելու է Թուրքիայի և նրա համախոհների էներգետիկ անվտանգությանը էներգառեսուրսները միջազգային շուկա ազատ արտահանելու միջոցով: Վերլուծաբանները ԱՄՆ-ի այս հայտարարությունը դիտարկեցին որպես Ռուսաստանի Դաշնության և Իրանի ազդեցության լրիվ չեղոքացում և էներգառեսուրսների նկատմամբ թուրք-անդերիկյան ազդեցության ապահովում<sup>28</sup>: Այդ հեռանկարը ցանկալի չէր Մոսկվային, որը ստիպված եղավ հակագրելու Վաշինգտոնի այդ ծրագրերին՝ վատացնելով իր հարաբերությունները Վրաստանի ու Ադրբեյջանի հետ: Միաժամանակ

<sup>25</sup> Ст. 1 Заявление делегации Республики Армения на саммите ОБСЕ. Лиссабонский саммит ОБСЕ.

<sup>26</sup> См. Шакарянц С. Россия и закавказские конфликты. № 80-81;

<sup>27</sup> Ст Шакарянц С. Россия и закавказские конфликты, № 80 // "Общее государство" // "Лайон Ашхар", 22 февраля 2001:

<sup>27</sup> СтУ Общее государство // "Айоц Ашхар", 22 февраля 2001:  
<sup>28</sup> СтУ Гнатовская Н. Проблема карабахского урегулирования в контексте Стамбульского комитата // "Миграция, экономика и международные отношения", декабрь 1999, № 44-46;

Ոուսաստանի Դաշնությունը միջոցներ ձեռնարկեց հայ-ռուսական ռազմավարական գործընկերությունն ուժեղացնելու ուղղությամբ:

1999 թ. հոկտեմբերին ՀՀ Ազգային ժողովում տեղի ունեցած ահարեկչական ակտից հետո ԵԱՀԽ ՄԽ հակամարտության կարգավորման պատասխանատվությունն ամբողջությամբ դրեց հակամարտող կողմերի նախագահների վրա:

2001 թ. ապրիլի 3-5-ը ռուսական և ամերիկյան կողմերի միջև դարարայան հարցի վերաբերյալ ԱՄՆ-ի Ֆլորիդա նահանգում տեղի ունեցած հանդիպման ժամանակ<sup>29</sup> հնչեցին նախապես մշակված արտահայտություններ, որոնք հեռու էին բանակցություններ կոչվելուց, ինչը վկայում էր միջնորդների միջև առկա լուրջ տարածայնությունների մասին:

Ակնհայտ է, որ ԵԱՀԽ ՄԽ որոշ անդամներ, դեկավարվելով սեփական շահերով, ցանկանում էին զսպել Ռուսաստանի Դաշնության գործունեությունը: Սակայն, ի տարբերություն ԱՄՆ-ի, որն ազատորեն հարաբերություններ էր հաստատում ԼՂՀ քաղաքական և տնտեսական ինստիտուտների հետ, Ռուսաստանի Դաշնությունն իրեն չեզոք էր պահում և չէր շտապում համակրանք արտահայտել Ղարաբաղի նկատմամբ: ԱՄՆ-ը նաև տնտեսապես էր օգնում Ղարաբաղին, իսկ նույն ոլորտում Ռուսաստանի Դաշնության ներդրումները կազմում էին արտասահմանյան ներդրումների միայն 3 %-ը: Ըստ ԼՂՀ նախկին նախագահ Ա. Ղուկասյանի՝ ԱՄՆ-ը դարձավ միակ երկիրը, որը պաշտոնապես ուղղակիրուն օժանդակեց Լեռնային Ղարաբաղին<sup>30</sup>: Ինչ վերաբերում է արևանտյան երկրների ներկայացուցիչներին, ապա նրանք այցելում էին ԼՂՀ պարբերաբար, մինչեւ Ռուսաստանի Դաշնությունը որևէ քայլ չէր ձեռնարկում:

Ամփոփելով կարող ենք արձանագրել, որ ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիան զգուում էր ընդլայնել իր դիրքերը տարածաշրջանում՝ օժանդակելով Ադրբեյջանին ղարաբաղյան հակամարտությունում: Դա հակասում էր Ռուսաստանի Դաշնության շահերին, որովհետև Ռուսաստանի Դաշնությունը գրկվելու էր Կովկասում իր միակ ռազմավարական գործընկերությունը կորցնելու էր իր ազդեցությունը տարածաշրջանում: Ահա թե ինչու Ռուսաստանի Դաշնությունը սկսեց քայլեր կատարել հակամարտությունը կարգավորելու գործում: Սակայն այդ քայլերը երեսն ուշանում էին, երբեմն հակասում Հայաստանի և ԼՂՀ շահերին, ինչի արդյունքում Հայաստանը հայտնվեց Լեռնային Ղարաբաղը կորցնելու վտանգի առաջ:

Հայաստանը հարկադրված էր վերանայելու իր դիրքորոշումը Ռուսաստանի Դաշնության նկատմամբ: Անհրաժեշտ է նշել, որ Ռուսաստանի Դաշնությունը դեռևս չէր մշակել իր պաշտոնական դիրքորոշումը տարածաշրջանի նկատմամբ, և բացակայում էր հակամարտության կարգավորման անփոփ հայեցակարգը:

Հայաստանի և Ռուսաստանի միջև սերտ ռազմաքաղաքական հարաբերությունները պայմանավորված են այն բանով, որ Ռուսաստանը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ակտիվ միջնորդ է, ինչպես նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկիր: Ուշադիր ուսումնասիրելով Ռուսաստանի դերակատարումը հիմնախնդրի լուծման գործընթացում՝ հան-

<sup>29</sup> Տես Thomas de Waal. Black Garden. Armenia and Azerbaijan through peace and war. New York , 2003, էջ 267:

<sup>30</sup> Տես США – единственная страна, официально оказыывающая прямую помощь Нагорному Карабаху // "Азат Аրцах", 20-21. 10. 2004:

գում ենք այն եզրակացության, որ այդ գործընթացը լի է տարածաշրջանային, ռազմավարական և աշխարհաքաղաքական հակասություններով:

Այդ հակասությունները բարդացնում են Ռուսաստանի միջնորդական առաքելությունը և բացասաբար անդրադառնում բանակցային գործընթացի վրա: Ռուսաստանի միջնորդական գործունեության վրա բացասաբար են անդրադառնում նաև Արևմուտքի գործոնը, նրանց միջև եղած հակասությունները, որոնք առաջացնում են մրցակցային մթնոլորտ, ինչը թույլ չի տալիս համընդիմանուր դիրքորոշում նշակելու և իրականացնելու: Այդուհանդերձ, նույն այդ ուժերին ակնհայտ է, որ տարածաշրջանի կայունության և անվտանգության ապահովման շահերից է բխում ցանկացած հակամարտության քաղաքակիրթ լուծումը, իսկ դարաբաղյան հարցում դա արդեն հրամայական է: Յետևաբար, ժամանակի ընթացքում նրանք կառաջնորդվեն իրենց համար առավել գերակա շահով, այն է՝ տարածաշրջանում կայունություն և անվտանգություն ապահովելով և մի կողմ դնելով սեփական շահերը՝ կառաջնորդվեն սառը դատողությամբ:

**КАРИНА ГЕВОРКЯН – Роль Российской Федерации в урегулировании Карабахского конфликта (1991–1999).** – Статья освещает посредническую миссию России и ее роль в урегулировании Нагорно-Карабахского конфликта в 1991–1999 гг. Карабахский вопрос был и остается одним из приоритетных как во внешней, так и во внутренней политике РА. Для Армении очень важно активное участие своего союзника, России, в разрешении карабахской проблемы и то, какую позицию она в нем занимает. Автор приходит к выводу, что политика России в карабахском вопросе сильно влияла как на внутриполитическую жизнь Армении, так и на ее внешнеполитический курс.

Сегодня на фоне широкомасштабной деятельности США и НАТО на Южном Кавказе и активизации европейских структур в разрешении конфликтных ситуаций замечается некоторая пассивность России в карабахском вопросе, что может негативно повлиять на внешнюю политику Армении.

Активизация роли России в этом вопросе и усиление ее влияния на Южном Кавказе отвечает интересам обеих стран. Сильная и активная Россия – это сильный союзник для Армении.

**KARINA GEVORGIAN –The role of the Russian Federation in regulating Karabakh Conflict (1991-1999).** – The present paper addresses the issues of intermediary missions in Russia and the country's part in regulating Nagorno Karabakh conflict between 1991 and 1999. The Karabakh problem still remains one of the most focal issues both in domestic and foreign policy of Armenia. Armenia appreciates Russia's stance and active participation in the settlement of this issue. Based on the research data, the author presumes that Russia's policy on the Karabakh issue influenced Armenia's domestic affairs and foreign policy.

Presently, against the extensive activities of the USA and NATO in the South Caucasus, as well as the active participation of European structures in conflict resolution, Russia stands out with its passive stance, which may have a negative impact on the foreign policy of Armenia. Russia's active contribution to this issue meets the interests of both Russia and Armenia. Powerful and active Russia makes a strong ally for Armenia.